ՀայՓոստ
Հայաստանի Փոստ

#քոմարդիկամենուր

Կ-Կր/73-2025
13.01.2025թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մաթևոսյան,

Հայտնում ենք Ձեզ, որ «Հայփոստ» ՓԲԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ թիվ 3808 դասիչով փոստային բաժանմունքը ներկայումս գործում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի 1-ին փողոցի թիվ 28/1 հասցեում, որի ընդհանուր մակերեսը կազմում է՝ 40 ք/մ մակերես, և այն հանդիսանում է համայնքապատկան տարածք:

Պետք է նշել, որ ներկայումս Ընկերությունն անհրաժեշտություն է համարում տվյալ բաժանմունքը հիշյալ տարածքում տեղակայելու կարգավիճակն ամրագրել համապատասխան իրավական հիմքով:

ՀՀ կառավարության 10.03.2005 թվականի հ. 292-Ն որոշման համաձայն Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում հանդիսանում է որպես փոստային կապի ազգային օպերատոր:

Փոստային կապի մասին օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ փոստային կապի ազգային օպերատորին փոստային կապի օբյեկտների համար հատկացված հողամասերը կարող են տրամադրվել մշտական (անժամկետ) անհատույց օգտագործման համար:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ փոստային կապի ազգային օպերատորը ազատվում է գույքահարկից, հողի հարկից, տեղական հարկերից և տեղական ինքնակառավարման մարմինների սեփականությունը համարվող տարածքների վարձակալման համար նախատեսված վճարներից և վարձավճարներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով վերը նշված իրավանորմերով՝ խնդրում ենք ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի 1-ին փողոցի թիվ 28/1 հասցեում գտնվող 40 ք/մ մակերեսով տարածքն անհատույց իրավունքով հատկացնել Ընկերությանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **ՇՈՒՇԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Կատարող՝ Արամ Աբովյան
Անշարժ գույքի կառավարման
վարչության ղեկավար, Հեռ.՝ /041/ 80-10-10

«ՀայՓոստ» ՓԲԸ
ՀՀ, 0002, Երևան, Սարյան 22
+374 10 514 514
info@haypost.am
www.haypost.am

ՀայՓոստ
Հայաստանի Փոստ

ՀԱՅՓՈՍՏ
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Սարյան 22
ԽԼ-ՀՓ/73-2025

ՀԱՅԱՍՏԱՆ ARMENIA
Վճարված է
Tax perçue
HAYPOST

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ-0002
ՍԱՐՅԱՆ 22
«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲ.

L0126119911AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ RETURN	CN15
☐ Անհայտ/ Unknown	☐ Մերժված / Refused
☐ Տեղափոխված/ Gone away	☐ Չի պահանջվել/ Unclaimed
☐ Ոչ լրիվ հասցե/ Insufficient address	☐
Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date	

ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյան
Armenia ՎԱՅՈՑ ՁՈՐ Ք.ՎԱՅՔ Շահումյան 18

powered by Envelope, envelope.haypost.am

YAVO
3807
16 JAN 2025
STUDENTS
ARMENIA